Հաստատում եմ՝

Թալինի ավագ դպրոցի տնօրեն՝

_____ /Ա.Կնյազյան/

Թալինի ավագ դպրոցի 2022-23 ուս.տարվա Կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալի Աշխատանքային պլան

Կրթական աջակցությունների գծով

տնօրենի տեղակալ Ն.Մարտիրոսյան

1.Պարտադիր կրթության կենսագործում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կառավարման ժամկետը	Պատասխանատու
ա)	Հնարավորության սահմաններում,օրենքով նախատեսված կարգով, սոցիալապես անապահով ընտանիքիների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով:	Սեպտեմբեր	Տնօրեն Փոխտնօրեն Հաշվապահ Կազմակերպիչ
բ)	Պարբերաբար իրականացնել վերահսկողություն ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	տնօրեն փոխտնօրեն կազմակերպիչ
գ)	Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները `հիմնական դպրոցի աշակերտների համար պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ, կազմակերպիչ

2. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կառավարման ժամկետը	Պատասխանատու
ա)	Դպրոցում ստեղծել աշակերտական խորհուրդ՝ իր հանձնախմբերով	Սեպտեմբեր	Տնօրեն,փոխտնօրեն, Կազմակերպիչ
բ)	Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-աշակերտ հարաբերությունները:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ Կազմակերպիչ
գ)	Հետևողական աշխատանք տանել, որպեսզի աշակերտական խորհրդի աշխատանքները նպաստեն երիտասարդ սերնդի , նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը:	Ուստարվա ընթաքում	Կազմակերպիչ
դ)	Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ, զրույց-բանավեճեր, կլոր սեղաններ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:	Ուստարվա ընթացում	Կազմակերպիչ ԱԽ նախագահ
ե)	Ամիսը մեկ անգամ հրավիրել աշակերտական խորհրդի նիստ:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ ԱԽ նախագահ

3.Դաստիարակչական աշխատանքների կազմակերպում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կառավարման ժամկետը	Պատասխանատու
ա)	Դպրոցական պաշտոնական կայքէջի միջոցով ապահովել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության թափանցիկությունը և հանրային հասանելիությունը՝ հասարակության լայն շրջանում: Առանձին դեպքերում օգտագործել նաև դպրոցի ֆեյսբուէյան էջը:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ Աշխորհուրդ
բ)	Հետևողական աշխատանքների միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ Դասղեկներ

	Գեղագիտական դաստիարակություն		
գ)	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործընթացի բարելավման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն Կազմակերպիչ
դ)	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները , կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ Դասղեկներ
ե)	Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները, դպրոցի շրջակա տարաշքը մշտապես պահել մաքուր և խնամված:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն Կազմակերպիչ Ախ
	Ֆիզիկական դաստիարակություն		
զ)	Կազմակերպել վազքի, բազկամարտի, շախմատի մրցումներ դասարանների միջև:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
է)	Կազմակերպել և անցկացնել զրույցներ, բանավեճեր, կլոր սեղաններ, քննարկումներ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը կանխարգելելու վերաբերյալ:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ Կենսաբանության ուսուցիչներ Բուժքույր
	Ռազմահայրենասիրական աշխատանք		
ը)	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան 1-ին, 44-օրյա պատերազմում հայրենիքի պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	Ուստարվա ընթացքում	Կազմակերպիչ Ռազմագիտության ուսուցիչ

Համադպրոցական միջոցառումների գրաֆիկ

Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Գիտելիքի օր	Սեպտեմբերի 1
2.	Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն և հաստատում	Սեպտեմբեր-հոկտեմբեր
3.	Անկախության օրվան նվիրված միջոցառում	Սեպտեմբերի 21
4.	Ուսուցչի օր	Հոկտեմբերի 5
5.	Համադպրոցական միջոցառում «Ոսկե աշուն»	Հոկտեմբեր-նոյեմբեր
7.	Դպրոցի բակի,հուշարձանների տարածքի մաքրման աշխատանքների կազմակերպում աշ.խորհրդի կողմից	Տարվա ընթացքում
8.	Թեմատիկ պաստառների պատրաստում	Տարվա ընթացքում
9.	Հետևել կարգապահությանը,աշակերտների սանիտարական վիճակին	Պարբերաբար
10.	Ամանորյա միջոցառումների կազմակերպում, դասարանների ձևավորում	Դեկտեմբեր
11.	Աշ.խորհրդի նիստերի հրավիրում	Պարբերաբար տարվա ընթացքում
12.	«Լավագույն զարդարված դասարան» մրցույթի անցկացում	Դեկտեմբերի 21-22
13.	Հայոց բանակի օրվան նվիրվաց միջոցառում	Հունվարի 27
14.	Աշակերտական խորհրդի անկյունի բացում	Հունվար-փետրվար
15.	Գիրք նվիրելու տոնին ընդառաջ ինտելեկտուալ մրցույթի կազմակերպում :	Փետրվար
16.	«Տեառնընդառաջ», «Սուրբ Սարգիս»	Փետրվարի 12
17.	Գարնան տոներ, միամսյակին նվիրված միջոցառումներ	Մարտ-ապրիլ
18.	Սբ.Հարության տոն	Ապրիլի 17
19.	Հարգանքի տուրք մատուցել Քառօրյա պատերազմի զոհերի հիշատակին Եղեռնի զոհերի հիշատակին Մայիսյան հերոսամարտի զոհերի հիշատակին	Համապատասխանաբար
20.	Հազմակերպել «Աշակերտի օր»	Ապրիլի 11
21.	Կազմակերպել շնորհալի աշակերտների աշխատանքների մրցույթ	Տարվա ընթացքում
22.	Շնորհալի և պատրաստակամ աշակերտների խրախուսում	Տարվա ընթացքում
23.	Աշակերտական խորհրդի աշխատանքների ամփոփում	Ուս.տարվա վերջում
24.	«Վերջին դաս» միջոցառման կազմակերպում	Մայիս